ԿԱՐԾԻՔ

Ջեմմա Սամվելի Բաղդասարյանի «Ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտները և տարեց անձանց տարբերակված սպասարկման կազմակերպումը Հայաստանում» թեմայով հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ ատենախոսության վերաբերյալ

Ջ. Ս. Բաղդասարյանի ատենախոսությունը նվիրված է ժամանակակից հասարակության արդիական հիմնախնդիրներից մեկին՝ ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտներին, տարեցների խմբի և դրա սպասարկման ինստիտուցիոնալ առանձնահատկություններին ու գործառնությանը հասարակական-մշակութային գործոնների ներքո: Ներկայիս համաշխարհային գործընթացները, հասարակական, տնտեսական, մշակութային և քաղաքական փոխակերպումները իրենց արտացոլումն են գտնում և ազդում, ոչ միայն ընտանեկան համակարգի կազմակերպվածության, գործառնության, այլև բաղադրության վրա: Հեղինակի կողմից իրականացված սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունները առավելապես կապված են այն իրողության հետ, որ մեզանում գնալով փոխվում են սերունդների միջև հարաբերությունների կազմակերպման նկատմամբ տարեցների ու երիտասարդների դիրքորոշումները, միջսերնդային կապերի պահպանման անհրաժեշտության ավանդական մոդելը: Այս համատեքստում առաջ է գալիս տարեցների խնամքի կենտրոնների առկայության կարևորությունը, և այնտեղ առաջարկվող սպասարկման տարբերակվածության ազմակերպումը: Թեմայի արդիականությունը կայանում է նաև նրանում, որ մեծ թվով տարեցներ տարբեր պատճառներով ապրում են միայնակ, կամ խնամքի կենտրոններում, և նրանց խնամքի կազմակերպման արդյունավետությունը կբարձրանա, ծերացման սոցիալ-հոգեբանական դետերմինանտների ուսումնասիրման ու բացահայտման արդյունքում:

Տարեցների հիմնախնդիրների հետազոտումը հանդիսանում է հոգեբանական գիտության հեռանկարային և արդի ուղղություններից մեկը՝ նրանց վերասոցիալականացման տեսանկյունից:

Համապատասխան գիտական մշակումների վերլուծական ակնարկը թույլ է տվել հեղինակին մոտենալ այդ խնդրին մասնագետի կոմպետենտությամբ, որն ունակ է փաստարկումներով նշել սեփական տեսակետը;

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել տարեց և ծերունական տարիքիանձանց սոցիալ-հոգեբանական դետերմինանտները մշակել Հայաստանում նրանց սոցիալ-հոգեբանական սպասարկման կազմակերպումը կատարելագործելու առաջարկները:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից (որտեղ հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված վարկածը, աշխատանքի նորույթն ու նպատակը, խնդիրները, տեսամեթոդաբանական հիմքերը, տեսական և կիրառական նշանակությունը), երեք գլուխներից, եզրակացություններից, որոնք ունեն տրամաբանական հաջորդականություն և տեսականորեն շաղկապված են: Աշխատանքը շարադրված է 127 համակարգչային էջի վրա: Հեղինակի կողմից օգտագործվել է 191 գիտական աղբյուրներ, որոնք ներառում են ինչպես նախկին, այնպես էլ ժամանակակից աղբյուրներ տարբեր լեզուներով, որոնցում լիովին արտացոլված են ուսումնասիրվող հիմնահարցերը:

Հեղինակը ատենախոսության առաջին գլխում մանրամասնորեն տեսական վերլուծության է ենթարկում ծերության ոսցիալ-հոգեբանական հիմնախնդիրները, տարեցների սոցիալականացման և նոր դերերի հարմարման խնդիրները: Ինչպես նաև անդրադարձել է ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինատների ու ապասարկման կազմակերպման փոխկապվածության առանձնահատկություններին: Ատենախոսության երկրորդ գլխում, հեղինակի կողմից լուսաբանվում են Հայաստանում տարեցների սոցիալ-հոգեբանական և սոցիալ-դերային առանձնահատկությունները որոշող գործոնները, անձնային հոգեբանական դետերմինանտները և այլն:

Երրորդ հետազոտական գլուխը ամփոփում է ատենախոսի ուսումնասիրությունների արդյունքները: Ջ. Ս. Բաղդասարյանի աշխատանքն արժեքավորվում է նաև ընտրակազմի թվաքանակով 738, ընտրված հետազոտական բազմաբնույթ մեթոդներով ու մեթոդիկաներով: Հետազոտության հիմնական արդյունքների հավաստիությունն ապահովում է օգտագործված տեսական դրույթներով, ընթացիկ և վերջնական արդյունքների քանակական մշակման վիճակագրական մեթոդներով:

Երրորդ գլխում ատենախոսը նախ հիմնավորել է աշխատանքի հետազոտական ասպեկտը, բնութագրել հետազոտության օբյեկտները, նկարագրել կիրառվող մեթոդիկաները: Վերլուծության մեթոդներ են հանդիսացել բովանդակային վերլուծությունը տեղեկատվության ընդհանրացմամբ և խմբավորմամբ, մաթեմատիկական վիճակագրական վերլուծությունը՝ առաջնային նկարագրական վիճակագրություն (տոկոս, միջին արժեք, դիսպերսիա, Ստուդենտի T-կրիտերիա, χ^2):

Հետազոտության վերլուծության բոլոր փուլերում հեղինակը ցուցաբերել է բազմակողմանի գիտական հիմնավորումներ, տեսական և էմպիրիկ նյութի ընդհանրացման հիման վրա աշխատանքի հիմնական դրույթները ամփոփվել են եզրակացություններում:

Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները արտացոլված են հեղինակի ատենախոսության սեղմագրում և 9 հոդվածներում:

Աշխատանքի մանրակրկիտ ուսումնասիրությունը բացահայտեց որոշ վրիպումներ և թերացումներ, այսպես՝

1. Աշխատանքի նպատակի և վարկածի շարադրանքում անհամապատասխան են ներքոհիշյալ արտահայտությունները «*տարեց և ծերունական տարիքի անձանց* սոցիալ-հոգեբանական դետերմինանտներ», թե՞ «*ծերության* սոցիալ-հոգեբանական դետերմինանտներ»: Կարծում եմ հեղինակը պետք է հստակեցնի, քանի որ առաջինում խոսքը անձին է վերաբերում, երկրորդում՝ երևույթին, զարգացման փուլին:
2. Ատենախոսության մեջ պաշտպանության ներկայացված դրույթները պատշաճ ձևակերպված չեն, դրանք իրենց ձևակերպումներով նման են եզրակացությունների, քան հրապարակային պաշտպանության դրված դրույթների;
3. Գովելի է ընտրակազմի մեծ թվաքանակը, սակայն ցավալի է, որ հեղինակը մեթոդիկաները կիրառել է դիֆուզ, ավելի ճիշտ է ասել՝ խառը, ընդհանուր ընտրակազմից պատահականորեն ձևավորած խմբերում, չտարբերակելով և չհամեմատելով տուն ինտերնատում ապրողների և ընտանիքում ապրողների տվյալները և այլն և այլն:
4. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը իր կողմից ընտրված մեթոդները կիրառեր բոլոր խմբերի համար:

Սակայն վերը նշված դիտողությունները ոչ մի կերպ չեն արժեզրկում ատենախոսության նշանակությունն ու բովանդակությունը: Մեր կարծիքով դրանց հաշվառումը միայն կնպաստի աշխատանքի համապատասխան ձևակերպմանը և կբարձրացնի նրա արժեքը:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Ջեմմա Սամվելի Բաղդասարյանի «Ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտները և տարեց անձանց տարբերակված սպասարկման կազմակերպումը Հայաստանում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի կողմից ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին և հեղինակը արժանի է հավակնած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ն. Ա. Հարությունյան _____

ԵՊՀ գիտ. քարտուղար

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մ. Վ. Հովհաննիսյան _____

Ք. Երևան 20 նոյեմբերի 2024թ.